

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿՐԿՆԱՎՈՐ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

ԱՆԴՐԱՆԻԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Վերլուծական կրկնավոր են կոչվում միևնույն բառի կամ արմատի հարադրական կրկնությունները կազմված բարդությունները, որոնց բաղադրիչներն ունեն մեկ բառի իմաստ, բայց պահպանում են իրենց շեշտը, հանդես են գալիս անջատաբար ու արտասանվում են միջբառային դադարով, որը դրավոր խոսքում արտահայտվում է բաղադրիչների անջատ կամ միուլթյան գծիկով դրությունները: Օրինակ մեծ-մեծ, փոքր-փոքր, երկու-երկու, մերթ ընդ մերթ, մեկ առ մեկ, լուկ-մնջիկ, վազել-վազվզել, թե-թեի տալ, կաոր-կաոր անել, վեր-վեր թռչել և այլն: Ինչպես երևում է օրինակներից, վերլուծական կրկնավոր բարդություններն իրենց խոսքիմասային արտահայտությունները միատարր չեն և բաժանվում են երկու խմբի՝ անվանական ու բայական: Ինչ խոսք, այս բաժանման մեջ, հատկապես անվանական բարդությունների ըմբռնման հարցում, կա որոշ պայմանականություն. այս խմբի մեջ միավորում ենք ոչ միայն բուն անուն բառերի, այլև ընդհանրապես բոլոր ոչ բայ բառերի հարադրական կրկնությունները: Անվանական և բայական կրկնավոր բարդությունները դրսևորում են ինչպես ձևաբանական, այնպես էլ կառուցվածքային-բառակազմական ու իմաստային-ոճական տարբեր յուրահատկություններ:

ա. ԱՆՎԱՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿՐԿՆԱՎՈՐ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ. ԽՈՍՔԻՄԱԱՅԻՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԻՄԱՍՏԱՅԻՆ ԱՈՍԱՋՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Անվանական վերլուծական կրկնավոր ենք դիտում ոչ բայ բառերի հարադրական կրկնությունները կազմված բարդությունները: Հետևաբար նման կրկնավորները կազմում են թե՛ լիիմաստ և թե՛ սպասարկու կամ ձևական բառերը: Դրան համապատասխան էլ անվանական վերլուծական կրկնավոր բարդությունները բաժանվում են երեք խմբի՝

ա/ լիիմաստ կամ նյութական իմաստ ունեցող բառերով արտահայտված կրկնավորներ. ինչպես՝ մեծ-մեծ, մեկ-մեկ, բարձր-բարձր, արագ-արագ, շուտ-շուտ, քիչ-քիչ, գունդ-գունդ, պինդ-պինդ և այլն:

բ/ լիիմաստ և թերիմաստ կամ սպասարկու բառերով արտահայտված կրկնավորներ. այս դեպքում նյութական իմաստ ունեցող բառը հանդես է գալիս որպես կրկնյալ և կրկնորդ, իսկ սպասարկու բառը հարադրության եզրերը կապակցող կապ է կամ շղկապ. ինչպես՝ մեկ առ մեկ, քայլ առ քայլ, բառ առ բառ, ժամ առ ժամ, երես առ երես, ավելի ու ավելի, կրկին ու կրկին և այլն:

դ/ սպասարկու կամ թերիմաստ բառերով արտահայտված կրկնավորներ, որպիսիք հիմնականում կապերով ու շաղկապներով արտահայտվածներն են, որ համեմատաբար փոքր թիվ են կազմում. *ինչպես՝* իսկ և իսկ, մեջ ընդ մեջ, ճը՛ռռ - ճը՛ռռ, չը՛խկ - չը՛խկ, վա՛յ-վա՛յ և այլն:

Վերլուծական կրկնավորների մի մասը պարզ հարադրությունն է, նույն բառի անփոփոխ կրկնությունը, իսկ մի մասը բառի կամ արմատի փոփոխված, երբեմն էլ ոչ ամբողջական կամ հատվածական կրկնությունն է: Բոլոր դեպքերում անվանական վերլուծական կրկնավոր բարդությունները ներկայացնում են կրկնվող արմատների կամ բառերի հարակցությունը որպես մեկ բառական միավոր. *ինչպես՝* արագ-արագ, մեծ-մեծ, հատ-հատ, աման-չաման, ծուռ ու մուռ, շիփ-շիտակ, մեջ ընդ մեջ և այլն:

Ըստ բաղադրիչների կապակցման եղանակի, անվանական վերլուծական կրկնավոր բարդությունները բաժանվում են երեք խմբի

ա/ հարակցական կրկնավորներ, երբ բարդության բաղադրիչները կապվում են պարզ հարակցումով, որը դրավոր խոսքում արտահայտվում է միության գծիկով. *ինչպես՝* երկու-երկու, ալար-ղալար, կաս-կարմիր, շտապ-շտապ, ուշ-ուշ, ծուռտիկ-մուռտիկ և այլն:

բ/ շաղկապավոր կրկնավորներ, երբ բարդության բաղադրիչները կապակցվում են ու, և միավորիչ շաղկապներով: Սրանք ժողովրդախոսակցական լեզվամտածողության կնիքն են կրում իրենց վրա. *ինչպես՝* մեջ ու մեջ, երկար ու երկար, ինձ ու ինձ, ծակ ու ծուկ, ինչ և ինչ, սուտ ու մուտ, բյուր և բյուր, շատ և շատ և այլն:

գ/ նախդրավոր կրկնավորներ, երբ բարդության կրկնվող եզրերը միանում են դրաբարյան նախդիրներով: Այստեղ առավել ակտիվ գործածություն ունեն առ և ընդ նախդիրները, որոնց գիջում է ի նախդիրը. *ինչպես՝* քայլ առ քայլ, տող առ տող, մի առ մի, փոխ ի փոխ, կալ ի կալ և այլն:

Ծանոթություն: Գրաբարում պարզ հարադրական և նախդրավոր կրկնավոր բարդությունները հանդես են դալիս բաղադրիչներից մեկի կամ երկուսի ձևափոխությամբ. *ինչպես՝* այր ըստ առնէ (իրարու), այր զարամբ (իրարու), ամ ամէ, դինչ ինչ, ամ ըստ ամէ, ամիս յամսոյ, ի ժամանակաց ժամանակս, կարճ ի կարճոյ, մի ըստ միոջէ (մի առ մի), վեր ի վերոյ (երեսանց) և այլն:

Նախդրավոր կրկնավոր բարդության մեջ նախդրի դերը ոչ այնքան կապակցական, որքան բառական-բառիմաստային է: Ամեն դեպքում, մանավանդ վերլուծական կրկնավոր ձևերում, նախդիրը կրկնվող բառի կամ արմատի իմաստային դաշտ է ներմուծում իր հարաբերության իմաստը: Սա լավագույնս երևում է միևնույն կրկնավոր բարդության ոչ նախդրավոր և նախդրավոր ձևերի համեմատությունից. *ինչպես՝* «Նա մեկ-մեկ կարգաց բոլոր նամակները» և «Նա մեկ առ մեկ կարգաց բոլոր նամակները»: Առաջին նախադասության մեջ մեկ-մեկ-ը արտահայտում է գործողության կատարման ձևը, իսկ երկրորդ օրինակում մեկ առ մեկ բառի մեջ առ նախդիրը ձևի իմաստը համալրում է բնական հաջորդականության հարաբերության իմաստով: Ահավասիկ նմանատիպ բնագրային օրինակներ առ նախդրով. «Մի առ մի մեռան յուր քրոջ որդիքը» /Փափ., 54/: «Արյունն է ծորում կրծքից շիթ առ շիթ» /Իս., 2, 194/:

Հարկ է նշել, որ հայերենի զարգացման ներկա փուլում նախդրավոր վերլուծական կրկնավորները դրսևորում են համադրական ձևերի վերածվելու միտում, այսինքն՝ հավասարապես կիրառելի է դրանց նաև անանջատ գրությունը, միայն այն յուրահատկութամբ, որ առ և ընդ նախդիրներն այս դեպքում մնում են անփոփոխ, իսկ ի նախդիրը վերածվում է ե-ի: Այսպես՝ հմմտ. մերթընդմերթ, մեջընդմեջ, տոգաւտոգ, կաղեկաղ, փոխփոխ, շարեշար և այլն: Այսպիսով, անվանական վերլուծական կրկնավոր բարդության բաղադրիչների կապն արտահայտվում է միևնույն իմաստի կրկնությամբ, համադասական շղկապներով ու նախդիրներով:

Ծանոթություն: Անվանական ու բայական վերլուծական կրկնավոր բարդությունների մեջ մի առանձին խումբ են կազմում հա բառի շարակցումով ձևերը: Այստեղ հա -ն յուրատեսակ թարմատարի դեր է կատարում. ինչպես՝ տուր հա տուր, բեր հա բեր, փրստ-հա-փրստ, թըռ-հա-թըռ, կըչ-հա-կըչ, փըշտ-հա-փըշտ և այլն:

Հայերենի խոսքի մասերի մեծ մասին պատկանող բառերի կրկնությամբ կազմվում են բարդ բառեր: Չնայած կրկնության տեխնիկան հայերենում լայնորեն կիրառվել է վաղնջական ժամանակներից սկսած, այնուամենայնիվ այստեղ ոչ բոլոր բառերի կրկնությունն է ստեղծում նոր բառական միավոր: Հետևաբար արմատակրկնությունը կամ բառակրկնությունը ոչ միշտ է բառակազմական արժեք ձեռք բերում: Այսպես, օրինակ, գոյականների, ածականների, մակբայների և այլ բառերի հարադրական կրկնությունները բառույթային արժեք չունեն. կրկնվելիս դրանք դրսևորում են հմաստային նոր նրբերանգներ և հաճախ ստանում են այլ խոսքիմասային կիրառություններ՝ պայմանավորված չրացյալի արտահայտությամբ: Այսպես, օրինակ, միևնույն կրկնավոր դոյականը գոյականին առդրվելիս ստանում է ածականական, իսկ բային առդրվելիս՝ մակբայական կիրառություն: Հմմտ. խումբ-խումբ մարգիկ, գույն-գույն ծագիկներ և խումբ-խումբ հեռանալ, գույն-գույն բացվել և այլն: Ամենատարբեր խոսքի մասերի պատկանող բառերի հարակցական, շղկապավոր ու նախդրավոր կրկնություններով կազմված բարդությունները հանդես են բերում բաղադրիչների ներքին-իմաստային կապի, ընդհանուր բաղադրության բառիմաստի և այս վերջինով պայմանավորված նաև շարահյուսական կիրառության տարբեր յուրահատկություններ: Ուստի անհրաժեշտ է կատարել տարբեր խոսքի մասերի պատկանող կրկնավոր բաղադրությունների տարբերակված քննությունը:

1. Գոյականի հարադրական կրկնությամբ բարդության ձևավորումն արգի հայերենում դործուն երևույթ է: Գոյական+գոյական կաղապարով կրկնավոր բարդությունները լինում են հարակցական ու նախդրավոր, արտահայտում են բազմակիություն, զանազանություն, փոխհաջորդում և կազմում են՝

ա/ որական ածականներ. սրանք՝ որպես բազմապատիկության իմաստով հատկանիշ արտահայտող բառեր, պահանջում են հոդնակի որոշյալ. ինչպես՝ փունջ-փունջ /ծագիկներ/, խումբ-խումբ /երեխաներ/, թել-թել /մաղեր/, անասկ-տեսակ /ծրագրեր/ և այլն:

բ/ ձևի և ժամանակի մակբայներ. *ինչպես՝ տուն-տուն /շրջել/, փունջ-փունջ /քաղել/, խումբ-խումբ /հեռանալ/, քայլ առ քայլ /մոտենալ/, տող առ տող /արտասանել/, ըստի առ ըստի /ուշանալ/, գունդ առ գունդ /ղինաթափել/, խումբ առ խումբ /զննել/։ Սրանցից առ նախդիրով ձևերն ունեն նաև ընդհանուր թյան իմաստ։*

գ/ նոր գոյականներ՝ *Հավաքականության-միասնության, հոգնակիության, քանակի մեծացման իմաստներով. ինչպես՝ մարդ-մուրդ, ոսկոր-մոսկոր, աման-չաման, դրամ-մրամ, հաց-մաց, ծակ ու ծուկ և այլն։*

Գոյականի կրկնությամբ կազմված անվանական վերլուծական կրկնավորների շարքում մի առանձին խումբ են կազմում բառի ուղիղ և թեք ձևերի հարադրումով կազմությունները, որոնք հիմնականում բաժանվում են երկու ենթախմբի.

ա/ բառի ուղիղ ձև+սեռական-տրական հոլովածև կաղապարով կրկնավորներ. *ինչպես՝ ուս ուսի, ձեռք ձեռքի, մեջք մեջքի, թև թևի, խելք խելքի, քիթ քիթի, կտուց կտցի, կողք կողքի և այլն։ Նկատելի է, որ երբ այս ձևերը հանդես են դալիս որպես բայի միասնական լրացում՝ ձևի պարագա (մեջք մեջքի պահել, քիթ քիթի խոսել և այլն), բաղադրիչների շարահյուսական կապը մթազնած է լինում, իսկ երբ նույն բաղադրիչները որոշակիորեն ինքնուրույն ձևով են ընկալվում, կրկնորդի հանգման իմաստը գերակայում է (ինչպես՝ ուս ուսի տալ, ձեռք ձեռքի տալ և այլն)։ Հանգման, երբեմն նաև տեղի իմաստն ավելի է ընդգծվում, երբ կրկնյալն ու կրկնորդը հանդես են դալիս որոշյալ առումով. ինչպես՝ մատը մատին չխփել, ոտքը ոտքին գցել և այլն։*

բ/ բառի բացառական հոլովածև ուղիղ ձև կաղապարով կրկնավորներ։ Այս գեպքում գործառվում են գրաբարյան հոգնակի և աշխարհաբարյան եղակի բացառականները¹. *ինչպես՝ արքայից արքա, տիկնանց տիկին, տեղից տեղ, ժամից ժամ, ձեռքից ձեռք, դեպքից դեպք, տնից տուն և այլն։*

Ծանոթություն։ Այս կարգի որոշ վերլուծական կրկնավորներ ունեն համագրական կազմությամբ գրաբարաբախյալ զուգահեռ ձևեր։ Հմմտ. տնից տուն - տնետուն, քարից քար-քարեքար, սարից սար-սարեսար, դարից դար-դարեդար և այլն։

Գոյական+գոյական կաղապարով կրկնավոր բարդությունների շարքը պետք է դասել նաև էդ. Աղայանի կրկնավոր հարադրության մի առանձին տեսակ դիտած բաղադրական բառակապակցությունները, «որոնց առաջին բաղադրիչն է որևէ գոյական, իսկ երկրորդը՝ այդ գոյականից կազմված անձ ցույց տվող ածանցավոր կամ բարդ բառ, ինչպես՝ դուռ-դրկից, գյուղ-գյուղացի, տուն-տնեցի, եզ-եզատեր, այծ-այծատեր, հանդ-հանդվոր, կալ-կալվոր և այլն։ Այս կարգի կրկնավոր հարադրություններն արտահայտում են բազմակիության, հավաքականության և միասնության իմաստ /գյուղ-գյուղացի «գյուղացիներն ամբողջությամբ», դուռ-դրկից «բոլոր հարևաններ», եզ-եզատեր «եզներն ու եզատերերը» /2, էջ 235/։

¹ էդ. Աղայանը մերժում է աշխարհաբարյան բացառականով կազմությունները կրկնավոր բարդություններ դիտելը՝ դրանք համարելով շարահյուսական կապակցություններ (տես 2, էջ 231)։

2. Ածականներից կրկնավոր բարդություն են կազմում պարզ կամ արմատական որակականները: Ածականաձևական կաղապարով կրկնավոր բարդությունները լինում են հարակցական ու նախադրավոր և

ա/ պահպանում են ածականական նշանակությունը՝ արտահայտելով առարկայի որակական հատկանիշի սաստկացում, բազմակիություն. *ինչպես՝ մեծ-մեծ /խոստումներ/, սուր- սուր /փշեր/, կեռ-կեռ /հոնքեր/, սև-սև /աչքեր/, թուխ-թուխ /մազեր/, վարար-վարար /աղբյուրներ/ և այլն:*

Հարկ է նշել, որ իկ, ուկ վերջածանցներով կազմված որակական ածականներով բաղադրված կրկնավորներն արտահայտում են փառաքշանքով ու նվազականությունով հատկորոշվող հատկանիշ. *ինչպես՝ սիրունիկ-միրունիկ, լավիկ-մավիկ, նազուկ-մազուկ, տաքուկ-մաքուկ, բարալիկ-մարալիկ և այլն: Այսպիսի կրկնավորներին բնորոշ է փոխազդեցական հնչյունափոխությունը:*

բ/ ստանում են մակբայական կիրառություն՝ արտահայտելով դործողության ձևային հատկանիշի դրսևորման սաստկություն, բազմակիություն, աստիճանականություն. *ինչպես՝ բարձր-բարձր /խոսել/, հստակահարստ /քայլել/, ծուռ-ծուռ /նայել/, ծանր-ծանր /ներկայանալ/, սակավ առ սակավ /հանգստանալ/, փոքր առ փոքր /մոտենալ/ և այլն:*

3. Թվականներից կրկնավոր բարդություն են կազմում քանակականները՝ արտահայտելով բազմակիության և առավել ևս բաշխականության իմաստներ: Ընդամենը, կրկնավոր թվականները գոյականին առդրվելիս արտահայտում են բազմակիություն ու բաշխականություն և փոխակերպվում են բաշխական թվականների. *ինչպես՝* երկու-երկու տետր, ասուր-ասուր երեխա, հինգ-հինգ ծաղիկ և այլն, իսկ բային առդրվելիս արտահայտում են միայն բաշխականություն և ստանում են ձևի մակբայի նշանակություն. *ինչպես՝* հինգ-հինգ մոտենալ, տասը-տասը հեռանալ, երկու-երկու նստել և այլն: Այս վերջին դեպքում բաշխականությունն ավելի է ընդգծվում, երբ կրկնավոր թվականի ու բայի միջև հանդես է դալիս անգամ բառը: Ընդ որում կրկնավոր թվականաձևով կապակցությունը ստանում է չափի /նաև քանակի/ մակբայի նշանակություն. *ինչպես՝* «Հայրը ե. տղան երկու-երկու անգամ եկան մեզ մոտ»:

Անվանական բարդությունների շարքն են դասվում նաև նախադրավոր և շղկապավոր թվական կրկնավորները, *ինչպես՝* մեկ առ մեկ, քսան առ քսան, հարյուր առ հարյուր, բյուր և բյուր, հազար և հազար և այլն:

4. Դերանունները կրկնավոր բարդ բառեր հաղվադեպ են կազմում, քանի որ կրկնվում են շատ քիչ դերանուններ: Կրկնվում են մասնավորապես քանի, ինչ, քեզ, ձեզ, ինձ, իրեն, ամեն, ուրիշ, ով, այս և մի քանի այլ դերանուններ, որոնց կրկնված ձևերն արտահայտում են բազմակիության ու առանձնակիության իմաստներ և առդրվում են՝

ա/ գոյականին՝ արտահայտելով առարկայի չտարբերակված հատկանիշ. *ինչպես՝* ինչ-ինչ հանդամանքներ, այս-այս մարդիկ, այդ-այդ ծաղիկները, ուրիշ-ուրիշ հույսեր, քանի-քանի մարդիկ և այլն:

բ/ բային՝ արտահայտելով դործողության հատկանիշ. ընդ որում կրկնավոր դերանունը բայի հետ պարզ առդրմամբ կապվելու դեպքում ստանում է ձևի մակբայի նշանակություն. *ինչպես՝* իրեն-իրեն խոսել, «Ի-

րեն-իրեն քիչ փընթիւնթաց» /ՀԹԸԷ, 88/, իսկ այդ կապը անգամ բառով իրացվելու գեքում ձեռք է բերում չափի մակբայի իմաստ. ինչպես՝ «Քանի՛-քանի՛ անգամ ենք պատմել այդ մասին»:

Հաճախ կրկնավոր գերանվան բաղադրիչները կապվում են և, ու միավորիչ շաղկապներով (ինձ ու ինձ, քեզ ու քեզ, իրեն ու իրեն, մեզ ու մեզ և այլն), և այս դեպքում այն բացառապես լրացնում է բային ստանալով մակբայական նշանակութուն. ինչպես՝ «Ինձ ու ինձ մտածում եմ»: «Քեզ ու քեզ խոսում ես»: Իսկ երբ գերանունը ուղիղ ձևով է, կրկնութունն արտահայտում է առանձնության իմաստ. ինչպես՝ «Ես ու ես պիտի իրականացնեմ այդ ծրագիրը»: «Մենք ու մենք ենք մնացել այստեղ»:

5. Արդի հայերենում մակբայների կրկնությամբ բարդ բառերի ձևավորումը ևս հաճախագեպ է: Ընդ որում՝ մակբայները կրկնվելիս, պահպանելով հանդերձ իրենց խոսքիմասային արժեքը, միաժամանակ ձեռք են բերում կերպային նոր նշանակութուն՝ ցույց տալով դործողության հատկանիշի կրկնութունը: Այսպես՝ հմտ. արագ գնալ և՛ արագ-արագ գնալ, քիչ ուտել և՛ քիչ-քիչ ուտել, ուշ ներկայանալ և՛ ուշ-ուշ ներկայանալ և այլն: Բերենք բնագրային օրինակներ՝ «Մատուցողուհին ստեպ-ստեպ հայտնվում էր վարագույրի արանքում... /ՔԹՀ, 419/: «Ռեհանը ետ-ետ գնաց ու փովեց կանաչների վրա» /ՔԹԿԱ, 229/: Մակբայի կրկնութունն արտահայտում է նաև իմաստի սաստկացում: Այսպես՝ արագ-արագ նշանակում է «չատ արագ», «արագորեն»:

6. Նյութական իմաստ ունեցող բառերից սերած մոտ, պես, վրա, քով, հետ, դատ, մեջ կապերը ևս կազմում են կրկնավոր բարդություններ, որոնց մի մասը հանգես է գալիս որպես հարադրական բայերի ոչ բայական բաղադրիչ՝ հարադիր. ինչպես՝ մոտ-մոտ անել, մեջ-մեջ անել, վրա-վրա տալ, դատ-դատ անել /բաժանել/, իսկ մյուս մասը ստանում է մակբայական նշանակութուն. ինչպես՝ պես-պես նկարել, մեջ-մեջ դասավորել, հետ-հետ դնալ, քով-քով/ը/ կանգնել և այլն: Պես-պես կրկնավորը լրացնում է նաև գոյականին՝ ստանալով ածականական նշանակութուն. ինչպես՝ պես-պես ծաղիկներ, պես-պես պատկերներ և այլն:

Նմանապես որոշ կապեր կազմում են նաև նախդրավոր կրկնավորներ. ինչպես՝ մեջ ընդ մեջ, քով առ քով, մոտ առ մոտ, հետ ընդ հետ և այլն:

7. Զայնարկությունները գեղարվեստական խոսքում ավելի հաճախ հանդես են գալիս կրկնավոր բարդության ձևով՝ արտահայտելով զգացական կամ կամային այս կամ այն վերաբերմունքի սաստկութուն. ինչպես՝ ջան-ջան, հե՛յ-հե՛յ, հո՛-հո՛, վո՛ւ-վո՛ւ, վի՛շ-վի՛շ, ու՛-ու՛, ա՛խ ու վա՛խ, հա՛յ-հա՛յ, հա՛յ-հո՛ւ, կո՛ւ-կո՛ւ, ջո՛ւ-ջո՛ւ և այլն: Սրանց հարում են այն բառերը, որոնք ըստ էության բնաձայնական բառեր են կամ դրանց հարաբերակից ձևեր: Նման կրկնավոր բարդություններ ստեղծվում են առարկայի ձայնի նմանությամբ ու կրկնությամբ. ինչպես՝ ճը՛ո-ճը՛ո, կը՛ո-կը՛ո, հա՛ֆ-հա՛ֆ, բո՛ւ-բո՛ւ, գո՛ւ-գո՛ւ, լա՛յ-լա՛յ, կո՛ւ-կո՛ւ, լե՛-լե՛ և այլն: Արդի հայերենում հաճախագեպ է նաև հա բառ-մասնիկի շարակցությամբ կրկնավոր ձայնարկութունը. ինչպես՝ շըըխկ հա շըըխկ, թըըխկ հա թըըխկ, գըըմբ հա գըըմբ և այլն:

ՀնգթոնեԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿՐԿՆԱՎՈՐ ԲԱՐԴՈՒՆԵՐԻ ՆԵՐՈՒՄ

Անվանական վերլուծական կրկնավոր բարդություններում շատ հաճախ կատարվում է հնչյունափոխություն: Վերջինս երբեմն չի սահմանափակվում բառի սոսկ ձևային հատկանիշ լինելով և բառիմաստի դաշտում կատարում է որոշակի փոփոխություն, որն արտահայտվում է բառիմաստի ընդարձակման կամ բառի նոր իմաստների (հավաքականություն, բազմակիություն, հոգնակիություն և այլն) ձեռքբերման ձևով: Այսպես, օրինակ, աման նշանակում է «մեկ աման», իսկ աման-չաման՝ «ամանեղեն»: Նույն ձևով նաև լակոտ և լակոտ-լուկոտ («լակոտներ», փոխաբերաբար նաև «երեսաններ»): Ակնհայտ է, որ հնչյունափոխությամբ ուղեկցվող անվանական կրկնավոր բարդությունները շատ մեծ թիվ են կազմում և հատկորոշվում են դրա ամենատարբեր դրսևորումներով: Հիմնականում հնչյունափոխվում են հարակցական (միություն գծիկով) և շաղկապավոր բարդությունները: Սրանցում դործում են տարբեր կարգի հնչյունափոխություններ՝ հիմնականում փոխազդեցական, մասամբ պատմական-ժառանգորդական և այլն, իսկ նախդրավոր բարդությանն ավելի բնորոշ է հնչյունափոխվելու միտումը:

Անվանական վերլուծական կրկնավոր բարդություններում հնչյունափոխվում է հիմնականում կրկնորդը: Եվ քանի որ կրկնավոր բառերի գերակշիռ մասում կրկնորդը երկրորդ բաղադրիչն է, ուստի հնչյունափոխությունն էլ ավելի շատ կատարվում է այս բաղադրիչում: Իսկ սակավ դեպքերում, երբ իբրև կրկնորդ հանդես է գալիս բարդության առաջին բաղադրիչը, հնչյունափոխությունը փոխադրվում է այստեղ: Երկու դեպքում էլ հնչյունափոխությունն ուղեկցվում է բառի մեջ իմաստային տարբեր նրբերանգների ներմուծումով:

Ա. Իբրև անվանական կրկնավոր բարդության երկրորդ բաղադրիչ հանդես եկող կրկնորդում կատարվում են մասնավորապես հետևյալ հնչյունափոխությունները.

1. Կրկնավոր շատ բառերում գործում են ա>ու, ա>ի, ե>ու հնչյունափոխությունները, որոնք բառիմաստին հաղորդում են հավաքականության, նվազականության, սաստկության, հոգնակիության իմաստներ. ինչպես՝ մանր-մուկը /«շատ մանր»/, ծակ-ծուկ /«ծակեր»/, մարդ-մուկը, թաք-թուք, վաչ-վիչ, ձեն-ձուն, չեմ ու չում /նաև՝ չեմ-չում/, հայ-հույ և այլն:

Ծ ա ն ո թ ու թ յ ու ն : Հարակցումով արտահայտված այս բառերին բնորոշ է նաև ու շաղկապով տարբերակը. ինչպես՝ ծակ ու ծուկ, մարդ ու մուկը, ձեն ու ձուն, թաք ու թուք և այլն: Սրանք միավանկ բառերի կրկնություններ են: Ինչ վերաբերում է երկվանկ կրկնավորներին, այսպիսիք հանգես են դալիս երկու կարգի հնչյունափոխությամբ. ա/ փոխվում է կրկնորդի առաջին վանկի ձայնավորը. ինչպես՝ տաշի-տուշի, հարայ-հուրայ և այլն, բ/ փոխվում են կրկնորդի երկու ձայնավորները. ինչպես՝ փալաս-փուլուս, լակոտ-լուկոտ և այլն:

2. Այս կառուցվածքի բարդության մեջ խիստ տարածված է կրկնյալի սկզբի բաղաձայնի կրկնորդի սկզբում այլ բաղաձայնի վերածվելը: Մաս-

նավորասլես դործում են բ>մ, վ>մ, հ>մ, ս>մ, ց>մ, ճ>մ, լ>մ, թ>մ, ք>մ, պ>մ, տ>մ, ս>ք, պ>ս, ս>փ, հ>ճ, ս>բ, զ>բ, ծ>պ, լ>փ հնչյունափոխությունները: Բառասկզբի բաղաձայնի տարբերակումով նման հնչյունափոխություններն արտահայտում են բազմակիություն, հավաքականություն, նվազականություն իմաստներ. ինչպես՝ բարակ-մարակ /«չատ բարակ», «բարակավուն»/, ճանճ-մանճ /«չատ ճանճեր»/, սուսիկ-փուսիկ /«չատ սուսիկ»/, բանճար-մանճար /«բանճարներ»/, լերկ ու մերկ /«լիովին մերկ»/, փոքր-մոքր /«չատ փոքր», «փոքրավուն»/, նույն ձևով նաև՝ քիչ-միչ, կլոր-մլոր, առն-մոռն, պարապ-սարապ, հավ-ճավ, սիլի-բիլի, թան-ման, հեղիկ-մեղիկ, սևիկ-մևիկ, շլղիկ-մլղիկ, զիզի-բիզի, ծուտի-պուտի, լոթի-փոթի, սուս-փուս, քսի-փսի, ցախ ու մախ, քիչ ու միչ, սուս ու փուս և այլն:

3. Որոշ բառերի կրկնորդի սկզբում կատարվում է բաղաձայնի հավելում: Ձայնավորով սկսվող բառերը կրկնություն երկրորդ եզրում ստանում են մեծ մասամբ մ, սակավ դեպքերում էլ չ, պ և այլ բաղաձայններ. ինչպես՝ ուրազ-մուրազ, ալյուր-մալյուր, ազ-մազ, ակաս-մակաս, ավել-մավել, ու-մու, օրենք-մօրենք, ոլոր-մոլոր, աման-չաման, առակ-պառակ և այլն: Սրանք արտահայտում են հավաքականություն, բազմակիություն: Օրինակ՝ աման-չաման նշանակում է «ամաններ», «ամանեղեն», ուրազ-մուրազ՝ «ուրազներ» և ընդհանրապես «հյուսնի դործիքներ» և այլն:

4. Սակավադեպ կրկնորդում կատարվում է բաղաձայնի ու ձայնավորի միաժամանակյա հնչյունափոխություն. ինչպես՝ քաղցր-մեղցր (ք>մ, ա>ե) և այլն:

5. Որոշ բարդություններում կրկնյալի սկզբի ձայնավորը կրկնորդի սկզբում փոխվում է բաղաձայնի. ինչպես՝ ափեզ-ցփեզ, ակեզ-պկեզ, աղ-լոր-պղլոր, իլիկը-ծլիկը և այլն:

6. Սակավաթիվ բառերի կրկնորդում կատարվում է բաղաձայնի հավելում կամ փոփոխություն. ինչպես՝ թըրևկ-թըրևկ, փլան-փստան, զընդ-զըրնդ և այլն:

7. Մի քանի կրկնավոր բարդությունների կրկնորդի սկզբում ավելանում է զ նախդիրը. ինչպես՝ արդ ու զարդ, ամպ ու զամպ և այլն:

Բ. Ինչպես նշեցինք, հնչյունափոխություն կատարվում է նաև կրկնավոր բարդության առաջին բաղադրիչում, երբ վերջինս հանդես է դալիս իբրև կրկնորդ, իսկ հիմնական բաղադրիչը՝ կրկնյալը, փոխադրվում է բարդություն երկրորդ եզր: Նման բարդություններում կատարվում է հատկապես երկու կարգի հնչյունափոխություն:

1. Հաճախ նախադաս կրկնորդի սկզբի բաղաձայնն ընկնում է. օրինակ՝ ալար-դալար, այլուն-փայլուն, առք-փառք, ալան-թալան, ավալ-թավալ, արան-լարան, արմանք-զարմանք, ակաս-պակաս և այլն: Սրանք արտահայտում են սաստկություն իմաստ: Այսպես, օրինակ, ալար-դալար նշանակում է «չատ դալար», այլուն-փայլուն՝ «չատ փայլուն» և այլն: Այս կարգի հնչյունափոխությամբ միավանկ բառերն ունեն արտահայտության հարակցումով և ու միավորիչ շագկապով զուգահեռ ձևեր: Հմտ. առք-փառք և՝ առք ու փառք, ախտ-բախտ և՝ ախտ ու բախտ ուն-բուն և՝ ուն ու բուն և այլն:

Մ ան ո թ ու թ յ ու ն: Այս կրկնավորներին ձևով նման են ոլոր-մոլոր և ահել-ջահել հարակցական ձևերը, որոնցից առաջինը մասնակիրոն հոմանիշ, իսկ երկրորդը հականիշ բառերի պարզ միացություններ են:

2. Երբեմն կրկնավոր բարդություն «առաջին եզրը ներկայացնում է մեկ վանկ, որի սկզբի բաղաձայնն ու հաջորդող ձայնավորը կրկնվող բառին են, իսկ երրորդ բաղաձայն հնչյունն է փ կամ ս. Ինչպես՝ ճեփ-ճերմակ /նաև՝ ճիփ-ճերմակ/, սեփ-սև, սիփ-սպիտակ... շիփ-շիտակ, լեփ-լեցուն, լիփ-լիքը, լիփ-լրիվ, կափ-կանաչ, կափ-կապույտ, կափ-կարմիր, կաս-կարմիր...»: Նման կրկնությունը, որ սահմանափակ է և որոշ չափով նաև անսովոր, արտահայտում է սաստկություն: Այսպես՝ շիփ-շիտակ նշանակում է «չատ կամ բոլորովին սպիտակ», կաս-կարմիր՝ «բոլորովին կարմիր» և այլն: Ինչպես տեսնում ենք, այսպիսի բարդություններում առաջին բաղադրիչը երկրորդի մասնակի կրկնությունն է: Նմանատիպ ձևեր են նաև լեփ-լեցուն, կաս-կարմիր, կափ-կանաչ և այլ բարդություններ:

Գ. Եվ, վերջապես, ըստ Հր. Աճառյանի, հնչյունափոխությունը կրկնավոր բարդություններ պետք է դիտել նաև իրենց ձևով ու իմաստով մոտ բառերի հարադրական կրկնությունը. Ինչպես թև-թիկունք, խաղ ու խնդում, դուռ-դրացի, շուն-չնվոր, տուն-տեղ, արև-աշխարհք և այլն:

բ. ԲԱՅԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿՐԿՆԱՎՈՐ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վերլուծական կառուցվածքի կրկնավոր բարդությունների մյուս տեսակը բայական կրկնավորներն են: Անվանական վերլուծականների համեմատությամբ սրանք թվով քիչ են և, բնականաբար, բառական-բառակազմական ու նաև քերականական-ոճական ավելի սակավ յուրահատկություններ են ի հայտ բերում: Բայց սա, իհարկե, բնավ չի նվազեցնում բայական կրկնավորների դերն ու նշանակությունը բարդ բառերի համակարգում ընդհանրապես և կրկնավոր բարդությունների շարքում մասնավորապես: Այս տեսակետից էլ բայական վերլուծական կրկնավորները տարբերվում են թե՛ անվանական վերլուծական կրկնավոր բարդ բառերից և թե՛ բայական մնացյալ բարդություններից:

Բայական վերլուծական կրկնավոր բարդությունները հանդես են բերում իմաստային տարբեր յուրահատկություններ՝ պայմանավորված իրենց կառուցվածքային անմիատարրությամբ: Սրանք դրսևորվում են բառակազմական տարբեր կազապաքներով՝ պայմանավորված իրենց բազադրիչների ձևաբանական անմիօրինակությամբ: Այս բարդության բազադրիչները կապված են ստորադասական հարաբերությամբ. ընդ որում բարդության բոլոր դրսևորումներում գերադաս անդամը բայն է, որ բարդության բառույթային վիճակում լինում է անորոշ դերբայի, իսկ թեք ձևում խոնարհված կամ դիմավոր ձևով: Բարդության մյուս բազադրիչները հանդես են դալիս բայի խնդրառության պահանջով և վերջինիս հետ կապվում են լրացական հարաբերությամբ՝ անկախ արտահայտությունից: Նշենք, որ բայական կրկնավոր բարդություններում ստորադաս բազադրիչն արտահայտվում է թե՛ անուն բառով և թե՛ բայով: Բայական վերլուծական

կրկնավոր բարդություններն իրենց բաղադրիչների քանակային արտահայտությամբ լինում են

1/ Երկբազադրիչ, երբ բարդությունը բաղադրված է երկու բաղադրիչներից՝ կրկնյալից ու կրկնորդից, և երկուսն էլ բայ են ու միմյանց հետ կապվում են կամ համադասական, կամ ստորադասական հարաբերությամբ: Հարակցական կապակցությամբ կրկնավոր բարդության բաղադրիչները միևնույն բայի հաստատական ու ժխտական ձևերն են, որ միմյանց հետ կապվում են համադասությամբ. *ինչպես՝* ուաել-չուտել, ուզենալ-չուզենալ, գրել-չգրել և այլն, իսկ խնդրառական կապակցության դեպքում առաջին բաղադրիչը անորոշ դերբայի գործիական հոլովածին է, երկրորդը՝ նույն բայի ուղիղ կամ խոնարհված ձևը, և սրանք կապվում են ստորադասությամբ. առաջին բաղադրիչը երկրորդի հոլովական լրացումն է. *ինչպես՝* ասելով ասել, ատելով ատում եմ, համոզելով համոզել, համոզելով համոզեցինք և այլն:

2/ բազմաբազադրիչ. այս դեպքում բարդությունը բաղադրված է երկու եզրից, որոնցից երկրորդը դերադաս անդամ բայն է՝ իր խնդրառությամբ, իսկ առաջին եզրն ունի բաղադրյալ կազմություն². սա առանձին վերցրած անվանական կրկնավոր բարդությունն է: Այլ կերպ ասած՝ բազմաբազադրիչ բայական կրկնավոր բարդությունը բաղադրված է անվանական կրկնավոր բարդությունից ու վերջինիս լրացյալ բայից. *ինչպես՝* թև թևի տալ, գլուխ գլխի տալ, կտոր-կտոր լինել, երես-երես անել և այլն: Հետևաբար այս սլարադայում բազմաբազադրիչ տերմինի դործածությունն ունի որոշ պայմանականություն. նկատի է առնվում բարդության առաջին եզրի բաղադրյալ լինելը: Իրականում այս կարգի բայական կրկնավորներն էլ երկեզր են: Այսպիսով, բոլոր բայական կրկնավոր բարդություններն ունեն երկեզր կառուցվածք, միայն թե երկբազադրիչ կրկնավորների երկու եզրերը պարզ են, իսկ բազմաբազադրիչ կրկնավորների 1-ին եզրը բարդ է (կրկնավոր), երկրորդը՝ պարզ: Բայական վերլուծական կրկնավոր բարդությունները բաժանվում են մի քանի խմբի

1. Միևնույն բայի հաստատական ու ժխտական ձևերի համակցումով կրկնավորներ: Այս դեպքում կրկնյալի և կրկնորդի տարբերակումը նշույթավորվում է չ ժխտական մասնիկով. *ինչպես՝* բերել-չբերել, գնալ-չգնալ, կերավ-չկերավ, մոտեցավ-չմոտեցավ, եկավ-չեկավ և այլն: Սրանք հիմնականում ժողովրդախոսակցական կազմություններ են և արտահայտում են անմիջականության իմաստ. *ինչպես՝* «Նա եկավ-չեկավ՝ մեր վիճակը ծանրացավ»:

Պրոֆ. էդ. Աղայանը, խոսելով նման կրկնավոր բարդությունների մասին, գրում է. «Այսպիսի կրկնությունների հարակատար դերբայով կազմվում են անվանական հարադրություններ, *ինչպես՝* եզած-չեղած, ունեցած-չունեցած, կերած-չկերած, տեսած-չտեսած, բերած-չբերած և այլն (հմտ. Ունեցած-չունեցածը մի բան էի: Տեսած-չտեսածը գլխի էի ընկել: Կերած-չկերածը մի կտոր չոր հաց է)» /2, էջ 232/: Այս դնահատման հետ դժվար է համաձայնել: Բերված օրինակները, անշուշտ, բայական հարադրություն-

² Այս կարգի բարդությունները բայական կրկնավոր ենք համարում որոշ վերապահությամբ, քանի որ այստեղ կրկնությունը հանդես է գալիս բարդության ստորին օղակում:

ներ են, ավելի կոնկրետ՝ բայական կրկնավորներ են: Ինչ վերաբերում է վկայակոչված նախադասություններում այդ բարդությունների գոյականական կիրառությանը, ապա դա ընդամենը փոխանունություն է, իսկ փոխանունությունը հիմք չի տալիս ոչ գոյական բառերը, մանավանդ բայերը, գոյականների շարքը դասելուն: Այնպես որ նշված կիրառությունների մեջ էլ հարակատար դերբայի ձևերը /տեսած-չտեսածը, ունեցած-չունեցածը.../ մնում են որպես բայական ձևեր:

2. Միևնույն բայի անորոշ դերբայի գործիական հոլովածև + ուղիղ ձև կադապարով կրկնավորներ: Այս դեպքում կրկնյալը բարդության երկրորդ, իսկ կրկնորդը առաջին բաղադրիչն է, և սրանք միմյանց հետ կապվում են խնդրառություններով. առաջին բաղադրիչը երկրորդի հոլովական լրացումն է. ինչպես՝ անիծելով անիծել, սիրելով սիրել, ատելով ատել, կործանելով կործանել և այլն³:

Այս կապակցությունների մեջ կրկնորդը կրկնյալի հետ կապված է պարագայական-լրացական հարաբերությամբ՝ ձևի պարագայի սաստկական նշանակությունով, որն ավելի է շեշտվում կրկնորդի խոնարհված տարբերակում. ինչպես՝ «Նա ատելով ատում է քեզ» /չատ է ատում/: «Սիրելով սիրում եմ քո մարմինը...» /ԱԻ, 3, 204/ (չատ եմ սիրում):

3. Զուգադրական կրկնավոր բայեր՝ արտահայտված պարզ բայեր կրկնավոր ձև կադապարով: Սրանք կրկնյալ պարզ բայի ու իր կրկնավոր կրկնորդի հարադրությամբ կազմված բայեր են, որ արտահայտում են գործողության ինտենսիվություն, տևականություն. ինչպես՝ ծախել-ծախսծխել, քաշել-քաշքշել, դռուլ-դռուգուլ, դողալ-դողդողալ, ճաքել-ճաքճքել և այլն: Մեկ ընդհանուր բառական նշանակություն ունեցող այս բարդությունների առաջին բաղադրիչն արտահայտում է գործողության կատարումը մեկ անգամ, իսկ երկրորդ բաղադրիչը՝ նույն գործողության սաստկացումը, կրկնվելը բազմապատիկ անգամ: Հետևաբար բերված բառերն ունեն կերպավորման նշանակություն. գրանցում բազմապատիկության իմաստը շատ ավելի ընդգծված է արտահայտվում, քան նույն բարդությունների երկրորդ բաղադրիչում առանձին վերցրած: Հմմտ. «Քեզ գտնելու համար նա ամբողջ օրը վազել-վազվզել է քաղաքում»: «Քեզ գտնելու համար նա ամբողջ օրը վազվզել է քաղաքում»:

4. Համակցական բայական հաբադրություններ: Բայական հարադրության այս տեսակը ընդունել է պրոֆ. Ա. Աբրահամյանը՝ գրելով. «Համակցական ենք համարում բայական այնպիսի հարադրությունները, որոնց կազմիչ մասերը իրենց հերթին ամբողջովին կամ մասամբ հարադրություններով են արտահայտվում, այլ կերպ ասած՝ լինում են հարադրություններ հարադրության մեջ» /1, էջ 199/: Չիտրանալով այս հարադրությունների կառուցվածքային ու իմաստային յուրահատկությունների քննության մեջ՝ միայն նշենք, որ նման բայերի շարքում կան նաև բայական կրկնավոր ձևեր, որոնք բաղադրված են մեկ բաղադրյալ և մեկ պարզ կազմիչներից: Բաղադրյալ կազմություն ունի առաջին բաղադրիչը, որը,

³ Էգ. Աղայանն այս կարգի բարդությունները համարում է բայական կրկնավոր հարադրություններ /տե՛ս 2, էջ 232/, իսկ Վ. Առաքելյանը դիմավոր բայաձևին լրացնող նույն բայի գործիական հոլովածևը անվանում սաստկացման գործիական (տե՛ս 4, էջ 156):

լինելով անվանական կրկնավոր բարդություն, խնդրառությամբ կապվում է իր լրացյալ բայի հետ:

Համակցական բայական կրկնավոր բարդությունները միատարր չեն և ըստ բաղադրիչների բնույթի բաժանվում են երեք ենթախմբի՝

ա/ Միևնույն գոյականի /կամ անվանական այլ բառի/ ուղիղ և թեք ձևերի կապակցություն + բայ կաղապար: Այստեղ բարդության առաջին եզրում կրկնորդի կամ գոյականի թեք ձևի հոլովական արտահայտությունը բնականաբար պայմանավորված է լրացյալ բայի խնդրառությամբ⁴: Սա հիմնականում արտահայտվում է սեռական-տրականով. *ինչպես՝* մատը մատին չխփել, գլուխ գլխի տալ, ուս ուսի տալ, թե թեի տալ, մեջք մեջքի տալ և այլն: Սրանք անցել են վերախմաստավորման ճանապարհ՝ վերածվելով կայուն կապակցությունների:

բ/ Անվանական հարակցական կրկնավոր + բայ կաղապարով արտահայտված բայական կրկնավորներ: Սրանք հարադրի կրկնությամբ հարադրավոր բայեր են, երբ անվանական արմատի կամ բառի կրկնված ձևին հարադրվում է բայը: Նման բարդ բառերն արտահայտում են բազմապատիկություն իմաստ: Այս դեպքում կրկնավոր անվանական բաղադրիչները կրկնյալը և կրկնորդը, ուղիղ ձևեր են, միմյանց հետ կապվում են պարզ հարակցմամբ, որը գրավոր խոսքում արտահայտվում է միության գծիկով. *օրինակ՝* կտոր-կտոր անել, ական-թալան անել, պտույտ-պտույտ գալ, ծվեն-ծվեն լինել, ծվիկ-ծվիկ լինել, գալար-գալար գալ, բզիկ-բզիկ անել, քերի-քերի անել և այլն:

գ/ Շաղկապավոր անվանական կրկնավոր բարդություն + բայ կաղապարը: Բարդության այս կառուցյում անվանական կրկնավորի կրկնորդը մեծ մասամբ լինում է հնչյունափոխված. *ինչպես՝* վեր ու վեր թռչել, շուռ ու մուռ գալ, ետ ու ետ գնալ և այլն:

5. Հա բառի միջարկումով կազմված կրկնավոր բայեր, որոնք արտահայտվում են եզակի հրամայականով և ունեն հաղորդակցական արժեք՝ բնորոշ ժողովրդական պատումին. *ինչպես՝* տուր հա տուր, գնա հա գնա, արի հա արի և այլն:

6. Բայ + բայ կաղապարով նույն բայի հարակցական կրկնությունը՝ գործողության ինտենսիվություն և տևականություն իմաստներով. *ինչպես՝* գնալ-գնալ, վազել-վազել, քայլել-քայլել և այլն: Այսպիսիք երբեմն հանդես են գալիս կրկնորդի սկզբի բաղաձայնի հնչյունափոխությամբ, որը ժողովրդական լեզվամտածողության գունավորում է հաղորդում բառին: Նման հնչյունափոխությունը նաև բառիմաստի մեջ որոշ փոփոխություն է մտցնում՝ գործողության տևականությունը փոխարինելով բազմապատկականությամբ. *ինչպես՝* գրել-մրել /-գրոտել/, կտրել-մտրել /-կտրատել/, խոսել-մոսել /-չատ անդամ խոսել/, վազել-մազել /-վազվզել/, նստել-մստել /-նստոտել/, խազել-մազել /-խազմզել/ և այլն: Ընդհանրապես բայ+բայ կաղապարով կրկնավոր բարդությունը ժողովրդական լեզվամտածողության արտահայտություն է և ավելի շատ հանդես է գալիս բանավոր

⁴ Այս դեպքում հարադրության ներսում գործառվում է բազմակի խնդրառությունը. գերադաս բային խնդրային հարաբերությամբ լրացնում են կրկնյալը և կրկնորդը. առաջինը ուղիղ, իսկ երկրորդը՝ թեք ձևով:

խոսքում փոխանուն կիրառությունները. *ինչպես՝ «Քո այդքան գրել - մրելը ի՞նչ արդյունք պիտի տա»:*

7. Որոշ քարացած դիմավոր բայաձևեր, որոնց դիմային հարաբերությունները իմաստը միջազնած է, և դրանք այսօր հիմնականում առարկայի հատկանիշ են արտահայտում: Այսպես, օրինակ, վիճի-վիճի դիմավոր բայաձևը Ղարաբաղի բարբառում «չատախոս», «ճամարտակող» նշանակությամբ դառնում է անվանական անդամի լրացում. *ինչպես՝ «Հարևանս վիճի-վիճի /չատախոս/ մարդ է»:* նմանապես նույն վիճի-վիճի բայաձևը, անել բային հարադրվելով, կազմում է վիճի-վիճի անել /չատախոսել/ բայը: Այլ կերպ ասած արմատակրկնությունը հանդես է գալիս հարադիր բայի /վիճի-վիճի անել/ ստորին օղակում առաջին կազմիչում կամ բաղադրիչում:

Բայական վերլուծական կրկնավոր բարդություններում սակավադաս էրևան են գալիս տարբեր կարգի հնչյունափոխություններ, որոնցից հարկ է նշել մասնավորապես հարակցական կրկնավոր բայերի առաջին բաղադրիչի սկզբի բաղաձայնի անկումը (ազել-մազել, օկել-կոկել), երկրորդ բաղադրիչի սկզբի բաղաձայնի փոփոխությունը (հրել-մրել, խճել-մճել, համոզել-լամոզել, փշրել-մշրել), երկրորդ բաղադրիչի սկզբում գրաբարյան զնախադրի հավելումը (եռալ-զեռալ, ահահարել-զահահարել) և այլն:

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Աձ - Ավ. Իսահակյան, Երկերի ժողովածու, հհ. 2, 3, Երևան, 1952, 1975:
- ՀԹԸԷ - Հովհ. Թումանյան, Ընտիր երկեր, 1978:
- ՎՓԼԷ - Վ. Փափազյան, Ընտիր երկեր, Երևան, 1971:
- ՔԹՀ - Քր. Թափալցյան, Հայրենիք, Երևան, 1942:
- ՔԹԿԱ - Քր. Թափալցյան, Կյանքի արշալույսը, Երևան, 1957:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ա. Աբրահամյան, Բայը ժամանակակից հայերենում, Երևան, 1962:
2. Էգ. Աղայան, Ընդհանուր և հայկական բառադիտությունը, Երևան, 1984:
3. Հր. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 3, Երևան, 1957:
4. Վ. Առաքելյան, ժամանակակից հայերենի հոլովների և հոլովական կապակցությունների իմաստային առումները, Երևան, 1957:

АНАЛИТИЧЕСКО-ПОВТОРЯЮЩИЕСЯ СЛОВСОЧЕТАНИЯ
В СОВРЕМЕННОМ АРМЯНСКОМ

АНДРАНИК КАРАПЕТЯН

Резюме

Аналитическо-повторяющимися называются словосочетания с аналитическим повтором одного и того же слова или корня, составные части которых имеют лексический смысл, но выражаются отдельно и произносятся межсловными перерывами. Они разделяются на две группы: именные и глагольные. Именными аналитическо-повторяющимися считаются слова, которые составлены из сочетания существительных, прилагательных, числительных, местоимений, наречий, междометий, которые выражают суровость, однородность, множество, собирательность и т. д. (*թել-թել, տեսակ-տեսակ, գունդ-գունդ, մեծ-մեծ, սուր-սուր, մեկ-մեկ, ինչ-ինչ, ուրիշ-ուրիշ, արագ-արագ, վրա-վրա, պես-պես, հա՛յ-հա՛յ* и т. д.). Глагольных аналитическо-повторяющихся слов меньше, они бывают двухсоставные и многосоставные (*ուտել-ուտել, թև թևի տալ, գլուխ գլխի տալ, վեր ու վեր թռչել, շուք ու մուք գալ*).